

Այս տողերէն կը հասկցուի ուրեմն որ նոյն իսկ Մար-Սաբայի կենդանութեան կազմուած էր տեղւոյն Հայ Միաբանութիւնը, շինուած էր յատուկ մատուռ մը՝ ուր բազմաթիւ միաբանք իրենց լեզուաւ պաշտամունք կը կատարէին եւ կը հետեւէին վանական կեանքի :

Բ. Հայագգի Երեմիայի վանքը .

«Շնորհներով պայծառացած աստուածաբեալ մարդը» Հայագգի Երեմիան, Մար-Սաբայի վերջին տարիներուն՝ կը մեկնի վանքէն, ուրիշ վանք մը հաստատելու Կեդրոնի Զորին հիւսիսային եզերքը, Սբէլիոն կոչուած (Քարայրի վանք) վանքին մօտ, դէպ ի հիւսիս, ինն հարիւր մէթր հեռաւորութեամբ: Մար-Սաբա լսելով իր պատուական սարկաւազին մեկնումը և դիտաւորութիւնը՝ կը հետեւի անոր՝ ատաղձ, գործաւոր և դրամ առնելով իր հետը. կը շինէ մատուռ մը և վանք մը Երեմիայի և հետևողաց համար, կը կանոնադրէ գործադրելու իր սեփական վանքին կանոնները և ընդհանուր վերակացու կը նշանակէ Երեմիան: 532 ին էր որ կը հաստատուէր այս վանքը և կը կոչուէր Երեմիայի վանք, և ընտիր սարկաւազը հակառակ իր ակնկալութեան, ունեցաւ իր բաժինը տարափէն ա՛յն ոսկիներուն՝ որ այնքան տիրեցուցած էին զինքը. այս ակնարկութիւն մըն է Մար-Սաբայի կողմէն՝ Յուստինիանոս կայսրէն առնուած և վանքերուն ծախսուած մեծ գումարներուն մասին: Երեմիայի ձեռնարկը վանականաց համար բացառիկ իրողութիւն մը չէր. կային ուրիշներ ալ նոյնիսկ Մար-Սաբայի հակառակորդներ՝ որ թողով վանքը՝ կ'երթային այլուր և կը հիմնէին մենաստաններ և ինքը՝ Մար-Սաբան ալ կ'օժանդակէր: Երեմիայի ուրոյն վանք ունենալուն այս պատմական պարագան Սկիւթուպոլսեցին չէ յիշատակած իր վերոյիշեալ գրքին մէջ. տարբեր ազբերէ մէջ կը բերէ Raymond Génier (ՏԵՍ վերը, էջ 30-31): Վերև կարդացինք Սկիւթուպոլսեցիին փառաւոր վկայութիւնը Հայագգի Երեմիայի նկատմամբ. տարբեր անձ մը չենք կրնար նկատել ա՛յն Երեմիա սարկաւազը՝ որ իր անուամբ վանք մը կառոյց Կեդրոնի Զորին հիւսիսային եզերքը, օժանդակութեամբ Մար-Սաբայի: Ըստ մեր